



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ  
ՈՐՈՇՈՒՄ

« 17 » դեկտեմբերի, 2018 թվականի N 20/6

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 8-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17/1 որոշմամբ հաստատված 2019 թվականի գործունեության ծրագրի 2-րդ մասի 15-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել հաշվեքննության առաջադրանքը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Հանձնարարել ՀՀ հաշվեքննիչ պալատի իրավաբանական վարչության գործունեությունը համակարգող հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Ոսկանյանին՝ ապահովել հաստատված հաշվեքննության առաջադրանքի հիման վրա հաշվեքննության իրականացումը:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ  
ՆԱԽԱԳԱՀ

*Գ. Յուզբաբ*

Լ. ՅՈՒՅԱՆ

Հավելված

Հաստատվել է ՀՀ ՀՊ

2018 թ. դեկտեմբերի 17-ի թիվ 20/6 որոշմամբ

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ  
ԿԱԴԱՍՏՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ,  
ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ  
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ**

1. **Իրականացնել հաշվեքննություն՝** ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:
2. **Հաշվեքննության առարկան՝** անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման և կադաստրի համակարգի գործունեության ապահովում, ինչպես նաև պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչում, երաշխավորում և պաշտպանություն
3. **Հաշվեքննության տեսակը՝** համապատասխանության և կատարողականի:
4. **Հաշվեքննության ընթացակարգերը՝** հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում:
5. **Հաշվեքննության կատարման ժամկետը՝** 2019 թվականի հունվարի 21-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 27-ը ներառյալ:
6. **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝** 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը ներառյալ:
7. **Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում՝** ՀՀ հաշվեքննիչ պալատի իրավաբանական վարչություն:
8. **Հաշվեքննություն իրականացնող պաշտոնատար անձինք՝**

Վարչության պետ՝

Արամ Մամիկոնյան

Վարչության պետի տեղակալ՝

Մուշեղ Սաֆարյան

Վարչության պետի խորհրդական՝

Լուսինե Մինասյան

Գլխավոր մասնագետներ՝

Լևոն Հարությունյան


Անի Սողոմոնյան

Մասնագետ՝

Սերգեյ Միրզոյան

ՀՀ ՀԱՇՎԵՔՆԵԻՉ ՊԱԼԱՏԻ

ՆԱԽԱԳԱՀ



Լ. ՅՈՒՅԱՆ